

Վերադարձ տուն՝ հրդեհից հետո

Նախագգուշական քայլեր ձեռնարկեք: Եղեք ապահով:
Պահպանեք ձեր առողջությունը:



Մոխրի մաքրումն այն տարածքներում, որտեղ հրդեհից վնասներ չկան

- Մոխիրը, մուրը, փոշին և օդային այլ մասնիկներ կարող են կուտակվել տների և ձեռնարկությունների ներսում և դրանց դրսի հաստվածում:
- Անտառային հրդեհների մոխիրը համեմատաբար ոչ թունավոր է, բայց կարող է գրգռել մաշկը, աչքերը, քիթը և կոկորդը:
- Օդում հայտնված մոխիրը կարող է ասթմայի նոպաներ առաջացնել այն մարդկանց մոտ, ովքեր արդեն ունեն ասթմա:
- Մոխիրը, փոշին և բեկորները (**հատկապես այրված շենքերի**) կարող են պարունակել թունավոր և քաղցկեղ առաջացնող քիմիական նյութեր, այդ թվում՝ ասբեստ, մկնդեղ և կապար:



- **Թույլ մի տվեք, որ երեխաները խաղան մոխրի մեջ կամ մոխրով պատված իրերով:**
- Մաքրման ժամանակ կրեք **աման լվանալու կենցաղային ձեռնոցներ, երկարաթև վերնաշապիկ և երկար տաբատ՝ մաշկի հետ շփումից խուսափելու համար:** Եթե մոխիր է հայտնվում ձեր մաշկի վրա, որքան հնարավոր է շուտ լվացեք տաք ջրով և օճառով:
- Կոտրված նյութերի հետ աշխատելիս (օրինակ՝ ապակի, մետաղներ, փայտ և այլն) կրեք ձեռնոցներ, որոնք պաշտպանում են կտրվածքներից, քերծվածքներից և ծակոցներից (օրինակ՝ կաշվե կամ կլկարի ձեռնոցներ):
- Մաքրման ժամանակ կարելի է կրել մեկանգամյա օգտագործման N-95 դիմակ կամ ավելի լավը՝ մոխիր և օդային այլ մասնիկներ շնչելուց խուսափելու համար: Սակայն դրանք չեն պաշտպանում գազերից: Դրանք կարելի է գնել տնտեսական / շինանյութի խանութներից: **N-95 դիմակները պետք է պատշաճ կերպով տեղավորվեն դեմքին՝** առանց եզրերի շուրջը բացեր թողնելու: Դեմքին ոչ ճիշտ տեղավորված դիմակը նույնն է, ինչ ընդհանրապես դիմակ չկրելը:



- Փորձեք այնպես անել, որ մոխիրն օդ չբարձրանա: **Մի օգտագործեք տերևները փչելով հավաքող սարքեր և մի արեք այլ գործողություններ, որոնք մոխիրն օդ են նետում:** Ներքին և դրսի մակերեսները **թեթև սրբելը**, որին **հաջորդում է թաց լաթով մաքրումը**, տարածքը մոխրից մաքրելու լավագույն միջոցն են: Յանկույան դեպքում տարածքը ախտահանելու համար կարելի է օգտագործել սպիտակեցնող նյութի և ջրի լուծույթ: Պատշաճ օգտագործման համար կարդացեք տարայի պիտակի ցուցումները:
- Կրեք **պաշտպանիչ ակնոցներ** (ոչ բաց կողերով պաշտպանիչ ակնոցներ), եթե մաքրման պատճառով կարող է օդի մեջ մոխիր հայտնվել, և որպեսզի քիմիական մաքրող լուծույթներ օգտագործելու դեպքում կանխեք աչքերի մեջ դրանց կաթիլների հայտնվելը:
- Կրեք անվտանգության կոշիկներ կամ ամուր կաշվե կոշիկներ, որոնք բարձրանում են մինչև կոճերը, եթե մաքրվող տարածքում այրված բեկորներ (օրինակ՝ կոտրված ապակի, մետաղ, փայտ և այլն) կան:
- **Արտադրական փոշեկուլները և սովորական կենցաղային փոշեկուլները խորհուրդ չեն տրվում** մոխիրը մաքրելու համար: Այս փոշեկուլները չեն զտում փոքր մասնիկները, այլ դրանք փչում են օդ, որտեղից հնարավոր է դրանք շնչել: **HEPA-Ֆիլտրով փոշեկուլները** կարող են զտել փոքր մասնիկները, և դրանք կարող են օգտագործվել:
- Մոխիրը կարելի է թափել սովորական աղբարկղի մեջ՝ **նախ այն լցնելով աղբի պլաստիկ տոպրակի մեջ**. դա թույլ չի տա, որ աղբարկղը դատարկելիս մոխիրը ցրվի օդի մեջ և խառնվի դրան:
- Օրվա ընթացքում պարբերաբար ցնցուղ ընդունեք, երբ մաքրում եք մոխրով ծածկված ներսի և դրսի տարածքները:

ՎԱՐԵՎՈՐ ՀԻՇԵՑՈՒՄՆԵՐ

- Պատշաճ օգտագործման համար հետևեք փաթեթավորման պիտակի վրայի ցուցումներին:
- Այն մարդկանց համար, ովքեր պետք է դրսում երկար ժամանակ լինեն մոխրով ծածկված տարածքում, մոխրի հետ շփումը նվազագույնի հասցնելու համար կարող են օգտակար լինել դեմքին ամուր տեղավորվող N95 շնչադիմակները (ռեսպիրատոր):
- N-95 դիմակները կարող են դժվարացնել շնչառությունը, հատկապես թոքերի կամ սրտի հիվանդություն ունեցողների համար:

Ջրի անվտանգությունը հրդեհից հետո

Խրախուսվում է, որ բոլոր բնակիչները տեղեկացված լինեն իրենց ջրամատակարարման անվտանգության մասին: Հրդեհին արձագանքելու աշխատանքների արդյունքում կարող են լինել **վտանգավոր ջրի մասին ծանուցումներ** («Եռացնել ջուրը», «Չխմել», «Չօգտագործել» և «Չխմել/Չեռացնել»):



Խնդրում ենք պարբերաբար ստուգել վտանգավոր ջրի մասին ծանուցումները և հորդորները, որոնք կարող են ազդել ձեր տարածքի վրա: Որպեսզի համոզվեք, որ ձեր ջուրն անվտանգ է օգտագործելու համար՝

- Այցելեք ձեր տարածքի ջրային համակարգի կայքը կամ կապ հաստատեք նրանց հաճախորդների սպասարկման ծառայության հետ:
- Հետևեք բոլոր ցուցումներին, որոնք նշված են վտանգավոր ջրի մասին ծանուցումներում:

Տուժած տարածքներում գտնվող հաճախորդներին խորհուրդ է տրվում օգտագործել շշայցված ջուր: Երբ վտանգավոր ջրի մասին ծանուցումները չեղարկվեն, և ջրի նորմալ սպասարկումը վերականգնվի, միացրած թողներ տաք և սառը ջրի ջրագծերը այնքան ժամանակ, մինչև ջուրը մաքուր տեսք ունեն:

Ձեր տարածքում ջրի վերաբերյալ զգուշացումների մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք <https://lacounty.gov/emergency/> կայքի «**Զգուշացումներ ջրի մասին**» բաժինը:

Վայրի կենդանիները հրդեհից հետո

Անտառային հրդեհների պատճառով տեղահանված վայրի կենդանիները կարող են մտնել ձեր տարածք կամ տուն: Այն վայրերը, որտեղ կա աղբի կամ թափոնների կուտակում, կարող են գրավել վայրի կենդանիներին:



- **Աղբը պահեք կրծողներից պաշտպանված տարաներում, որոնք ամուր ծածկված են՝ կենդանիներին գրավելուց խուսափելու համար:**
- **Տնային կենդանիների կերը մի թողեք դրսում:**
- Ստուգեք այն տարածքները, որտեղ առնետներն ու վայրի կենդանիները կարող են քնել, թաքնվել կամ ուտելիք գտնել: Եթե հնարավոր է, ամուր փակեք այդ տարածքները:
- Այս հատվածները մաքրելիս պաշտպանվեք՝ կրելով ձեռնոցներ և դիմակ: Ավարտելուց հետո լվացեք ձեր ձեռքերը:

Սննդի անվտանգությունը հոսանքազրկումից հետո



Սննդի անվտանգությունը կարող է խնդիր լինել, եթե էլեկտրաէներգիան անջատվում է երկար ժամանակով: Եթե ձեզ մոտ հոսանքազրկում է եղել, կամ նկատում եք, որ ձեր խոհանոցում կան մոխիր, մուր, փոշի և այլ օդային մասնիկներ, **սննդային հիվանդություններից խուսափելու համար հետևեք հետևյալ խորհուրդներին.**

- Ցանկացած սննդամթերք կամ ըմպելիք, որն ունի վատ հոտ կամ փչացած լինելու նշաններ, պետք է դուրս նետվի: Լավագույն գործողությունն է՝ **«Երբ կասկածում եք, դեն նետեք այն»:**
- Ընդհանուր առմամբ, սառնարանում սննդամթերքը անվտանգ է, եթե հոսանք չի եղել ոչ ավել, քան **4 ժամ, իսկ** սառնարանի և սառցախցիկի դռները փակ են եղել: Սառնարանի և սառցախցիկի դռները փակ պահելն օգնում է պահպանել ամենասառը ջերմաստիճանը:
- Եթե հոսանքազրկումը տևում է ավելի քան չորս ժամ, կամ սառնարանի դուռը փակ չի պահվում, ավելի լավ է **դեն նետել փչացող սննդամթերքը**, ինչպիսիք են միսը, կաթնամթերքը և ձուն:
- Սառցախցիկում հալած մթերքը պետք է դեն նետել: **Նորից մի սառեցրեք հալած սնունդը:** Բոլոր մյուս սննդամթերքները պետք է ստուգվեն՝ անվտանգությունն ապահովելու համար:
- Հեղուկ (օրինակ՝ ջուր) պարունակող պլաստիկ շշերը, որոնք ծածկված են մոխրով, պետք է դեն նետվեն: Շիշը ցողելը **բավարար չէ**, քանի որ այդ մասնիկներն աղտոտում են կափարիչները, ինչը դժվարացնում է դրանց ախտահանումը:
- Մթերքները, որոնք չեն պահվել անջրանցիկ կամ հերմետիկ տարաներում և ծածկված են մոխրով, պետք է դեն նետվեն: Սա ներառում է այն ապրանքները, որոնք պահվել են սովորաբար կամ այլ փափուկ փաթեթավորման մեջ:
- Ջմուրված, նախապես չբացված ապակյա կամ մետաղյա բանկաների կամ տարաների մեջ պահվող սնունդը, օրինակ՝ մանկական սնունդը, պետք է, որ անվտանգ լինի օգտագործման համար: Բացելուց առաջ մաքրեք և ուտելուց առաջ պարունակությունը տեղափոխեք այլ տարայի մեջ:
- **Սննդամթերքը թափեք աղբի տոպրակների մեջ** և ամուր կապեք՝ նախքան աղբարկղի մեջ դնելը: Ճանճերի բուծումը կանխելու համար խորհուրդ է տրվում կրկնակի տոպրակների մեջ դնել:

